



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-1-Ե-3
2018թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Սկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բարայանի, Գ. Բաղիրյանի,
Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,
Գ. Դազինյանի, Ս. Չիչոյանի,
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2018 թվականի հունվարի 12-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի թափուր պաշտոնը համալրելու համար վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի վարչական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց թեկնածությունները և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Կարեն Աշոտի Ավետիսյանի թեկնածությանը:

2. Կարեն Աշոտի Ավետիսյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները: